

# Արշակ Չոպանյան

## Ա՜խ, գեթ երբ սիրտդ փուշն զգա տրտմության

Ա՜խ, գեթ երբ սիրտդ փուշն զգա տրտմության,
Երբ ձանձրույթի կամ զզվանքի վայրկյաններ
Հոգվույդ վրա թույներն իրենց թափել գան,
Երբ ցավ մը վիզդ վար ծռե կամ ստվեր
Մը կյանքիդ լույսը մղտացնե, կամ երբ սև
Գիշերին խորը քեզ թախիծ մը փարի,
Երբ վերջալույսն իր ոգեվարն հևիհև
Քեզ փոխանցե կամ իր ցուրտը մարմարի
Զմեռվան հո՜վը հոգիիդ մեջ կաթե,
Գեթ այդ մաղձոտ վրդովումի պահերուդ՝
Երբ անձուկ մը կփոթտե շուրթդ բուստե,
Հիշե՜, ռոպե մ'հիշե՜ դժբախտ սերս մութ։

Յատուկ Դուռ